# 277 Կթողնեմ աշխարհը, կգնամ Հորս մոտ,

1. Կթողնեմ աշխարհը, կգնամ Հորս մոտ,
Որ սիրող հայացքով իմ ճամփան է պահում,
Թե երբ կմտնեմ հանգիստը Իր:
Հայր իմ սիրասո՜ւն, ես Քեզ եմ գալիս,
Ընդունի՜ր հոգիս Քո սուրբ ձեռքերում:

2. Կթողնեմ տաղտկալի մարմինն այս հողեղեն,
Կգնամ Հայրենիք, ուր կենաց լույսի մեջ
Ցնծում են անհամար հոգիներ:
Հայր իմ սիրասո՜ւն, ես Քեզ եմ գալիս,
Ընդունի՜ր հոգիս Քո սուրբ քաղաքում:

3. Կգնամ Հորս մոտ, ուր սիրով հորդահոս
Բխում է սրտերում հավերժ արքայություն,
Երանավետ կյանք ու ցնծություն:
Հայր իմ սիրասո՜ւն, ես Քեզ եմ գալիս,
Ընդունի՜ր հոգիս Քո սուրբ հանդեսում: